Հաստատում եմ՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր

տեխնիկական գիտությունների թեկնածու,

դոցենտ Հ. Ղազեյան

11/01/2024թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԵՐԻԲԵԿՅԱՆ ԲԵՆԻԿ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԽԵՂՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՎՐԱ

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ԲԵՆԻԿ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԵՐԻԲԵԿՅԱՆԻ՝ «ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԽԵՂՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՎՐԱ» խորագրով ատենախոսությունը քննարկվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի նիստում (11.01.2024, արձանագրություն N 1): Ամբիոնի նիստին մասնակցում էին հոգեբանության և քաղաքագիտության» ամբիոնի վարիչ, հ.գ.թ., դոցենտ Լ. Հ.

Պետրոսյանը, ք.գ.դ., պրոֆեսոր Մ. Մարգարյանը, հ.գ.դ., պրոֆեսոր Ա. Բ. Լոքյանը, հ.գ.թ., պրոֆեսոր Ռ. Վ. Աղուզումցյանը, հ.գ.թ., դոցենտ Ս. Հ. Պողոսյանը, ք.գ.թ, դոցենտ Մ. Գ. Մարգարյանը, ք.գ.թ. Մ. Արսենյանը, դոցենտ Ա. Այվազյանը, ամբիոնի դասախոսներ Ա. Ղուշչյանը, Լ. Գրիգորյանը, գործավար Ս. Յ. Ավագյանը:

Աշխատանքը նվիրված է արդիական և սոցիալական հոգեբանության ոլորտի համար կարևոր հիմնահարցի ուսումնասիրությանը:

Մեր օրերում բազմազան և բազմաբնույթ են տեղեկատվական հոսքերը, որոնք իրենց ազդեցությունն են թողնում սոցիալ-հոգեբանական երևույթների վրա: Ժամանակակից հասարակությունը բնութագրվում է տեղեկատվական հագեցվածությամբ, բազմաթիվ մանիպուլյատիվ տեխնոլոգիաների կիրառությամբ, որոնք ձևախեղում են իրականությունը, վերափոխում են արժեքներ և գաղափարներ:

Այս համատեքստում մշակվում են տեղեկատվության կառավարման նոր գործիքներ, որոնք հիմնված են տեղեկատվության հավաքման, վերլուծության, մշակման և բաշխման մեխանիզմների վրա: Դրանցում իր ուրույն տեղն ունի մանիպուլյացիայի տեխնոլոգիաների զարգացման գործընթացը:

Հարկ է նշել, որ մանիպուլյացիայի հիմնախնդիրը քննարկման առարկա է դարձել տարբեր գիտությունների (էթիկա, քաղաքականություն, մշակութաբանություն, սոցիոլոգիա, հոգեբանություն և այլն) ներկայացուցիչների շրջանում: Դրանով է պայմանավորված, թերևս, հիմնախնդրի բազմակողմանիությունը և բազմաշերտ ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Ելնելով հիմնախնդրի արդիականությունից՝ ատենախոսն իր առջև նպատակ է դրել ուսումնասիրել մանիպուլյացիայի ներգործությունը զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների վրա իրականության վերաբերյալ տեղեկատվության ձևախեղման համատեքստում՝ կապված կոգնիտիվ ոլորտի ոճերի և առանձնահատկությունների հետ:

Ատենախոսը հետազոտության նպատակի իրականացման համար անդրադարձել է կոնկրետ խնդիրների ուսումնասիրությանը՝ տեսական, մեթոդաբանական,

փորձարարական: Հետազոտության խնդիրների համապատասխանությամբ առանձնացվել են մեթոդները և մեթոդիկաները:

Ատենախոսությունն ունի տեսական և գործնական նշանակություն: Տեսական նշանակությունն ատենախոսի կողմից ինտեգրատիվ մոտեցում ցուցաբերելն է՝ վերլուծելու մանիպուլյացիայի ֆենոմենը տարբեր գիտակարգերում, ներկայացնելու մանիպուլյացիայի սոցիալ-հոգեբանական մեխանիզմներն ու մանիպուլյատիվ ներգործության մեթոդները: Գործնական նշանակությունն այն է, որ բացահայտվել են մանիպուլյատիվ ներգործության առավել զգայուն կոգնիտիվ ոճերը, ինչը մեծ նշանակություն ունի հաղորդակցական լայն դաշտ ունեցող մասնագիտություններով մասնագետների պատրաստման, վերապատրաստման, մանիպուլյատիվ ներգործություններից պաշտպանելու, ինչպես նաև զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների ընկալման գործընթացում տեղեկատվական ձևախեղումների բացահայտման համատեքստում:

Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ բացահայտվել է մանիպուլյատիվ ներգործությամբ տեղեկատվության ձևախեղված զանգվածային ընկալումների ձևավորման գործընթացում կոգնիտիվ երկբևեռ ոճերի փոխկապվածությունը արտաքին միջավայրային ազդեցությունից և սոցիալական վստահության աստիճանից:

Ատենախոսության ներածության մեջ հստակ սահմանվել են հետազոտության օբյեկտը և առարկան, առաջադրվել է վարկածը, նեկայացվել են պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Հետազոտությունը ներկայացված է փուլերով՝ ըստ տարիների: Հետազոտության արդյունքները վերլուծվել են վիճակագրական ծրագրերի կիրառությամբ, մասնավորապես կիրառվել են Շապիրո-Ուիլկի, Սպիրմենի, Կենդալի, Ռ. Լայկերտի և դեսկրիպտիվ վիճակագրական վերլուծության մեթոդներով:

Սույն աշխատությունն առանձնանում է հետազոտության ընտրանքի ծավալով և բազմազանությամբ: Հետազոտությունը ներառել է ոչ միայն սեռատարիքային, այլև սոցիալական և կրթական տարբեր շերտերի ներկայացուցիչների: Ընդգրկել են

ինչպես բարձրագույն, այնպես էլ միջնակարգ և մասնագիտական կրթական մակարդակ ունեցող անձանց: Հետազոտությանը մասնակցել է 420 կին, 420 տղամարդ, ընդհանուր՝ n=840:

Հետազոտության իրականացման ընթացքն ու ստացված արդյունքները քննարկվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնում: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հոգեբանական դիտարանում, «Հույս և ապագա» ՀԿ-ում մասնագիտական վերապատրաստման և որակավորումների բարձրացման մասնագետների, «ԲԱՇՕՅԼ» ՍՊԸ-ի «ԲԵՍԹ ՌԵԱԼԻԹԻ» ՍՊԸ-ի աշխատակիցների շրջանում, Լոռու և Վայոց Ձորի մարզերի մարզպետարանների աշխատակիցների և ազգաբնակչության շրջանում: Հետազոտության արդյունքները քննարկվել են «Մրցունակ կրթության և գիտության հիմնախնդիրները հարափոփոխ աշխարհում» (Երևան, 2023), «Պատերազմի սոցիալ-հոգեբանական 7 հետևանքները» (Երևան, 2022), «Հետազոտական կարողությունների զարգացում» (Երևան, 2021) միջազգային գիտաժողովներում:

Փորձարարական հետազոտությունն իրականացվել է գիտահետազոտական աշխատանքներին ներկայացվող պահանջներին համապատասխան: Ստացված արդյունքների հիման վրա ատենախոսը հանգել է եզրակացությունների:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված 12 հրապարակումներում:

Սեղմագիրն ամբողջությամբ արտահայտում է ատենախոսության բովանդակությունը:

Բարձր գնահատելով կատարված աշխատանքը՝ այնուամենայնիվ ցանկանում ենք նշել որոշ դիտարկումներ, որոնք առավել մանրամասն պարզաբանման կարիք ունեն: Մասնավորապես՝

1.Ատենախոսության մեջ բավարար արտահայտված չեն տեսական և մեթոդաբանական խնդիրների վերաբերյալ եզրակացությունները, մինչդեռ ամբողջական պատկեր ստանալու համար նպատակահարմար կլիներ

եզրակացություններում կոնկրետ արտահայտվեին տեսական և մեթոդական խնդիրների ուսումնասիրության արդյունքները:

2. Ատենախոսության ներածության մեջ հիմնահարցի մշակվածության աստիճանին անդրադառնալիս նշված են երկու, ինչպես նաև գրականության ցանկում՝ միայն մեկ հայ հեղինակներ, մինչդեռ նպատակահարմար կլիներ նշվեին այլ հայ հեղինակների աշխատությունները, ովքեր իրենց աշխատանքներում անդրադարձել են զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների ուսումնասիրությանը:

3. Ատենախոսության փորձարարական մասն առանձնահատուկ է հետազոտության մեծաքանակ արդյունքներով, որոնք ներկայացված են մաթեմատիկական վերլուծության մի քանի մեթոդներով, սակայն դրանց վերաբերյալ հոգեբանական մեկնաբանությունները սակավ են, ինչն առավել կհարստացներ աշխատանքը:

4.Ատենախոսության մեջ հեղինակի կողմից առաջադրված վարկածում մանիպուլյատիվ ներգործությամբ տեղեկատվության ձևախեղված զանգվածային ընկալումների պայմանավորվորվածության համար մատնանշված են գործոնները, ինչպես նաև նշվում է երեք առանձնահատկության մասին, սակայն առանձնացված չեն սեռային և տարիքային գործոնները, մինչդեռ հետազոտության մեջ և եզրակացություններում դրանք մեկնաբանվում են տարիքային և սեռային տարբերություններով:

Նշված դիտարկումները չեն ստվերում գիտական աշխատանքի արժեքը. այն ունի հստակ տեսական և գործնական նշանակություն:

Հիմք ընդունելով թեմայի արդիականությունը, կատարված հետազոտության ծավալը, կիրառական նշանակությունը՝ ԲԵՆԻԿ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԵՐԻԲԵԿՅԱՆԻ՝ «ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԽԵՂՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՎՐԱ» ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի

գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համարել համապատասխան ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, այսինքն՝ ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ կարևոր խնդրի լուծում, իսկ ԲԵՆԻԿ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԵՐԻԲԵԿՅԱՆՆ արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՀՀ պետական կառավարման
հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ,
հոգեբ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Լ. Հ. Պետրոսյան

Նիստի քարտուղար՝ Ս. Ավագյան

Ամբիոնի վարիչ Լ. Պետրոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ՊԿԱ գիտական քարտուղար

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ս. Հ. Պողոսյան